



**ՀՈՒՇԱԳԻՐ ՀԲՄ-Ի ԵՎ ՈՒԲԱԱ-Ի ՄԻՋԵՎ**

15.05.2015



**НЕЗАЛЕЖНА  
АСОЦІАЦІЯ  
БАНКІВ  
УКРАЇНИ**

Հայաստանի բանկերի միությունը (ՀԲՄ) և «Ուկրաինայի բանկերի անկախ ասոցիացիան» (ՈւԲԱԱ), ի դեմս ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանի և ՈւԲԱԱ-ի գործադիր տնօրեն Ելենա Կորոբկովայի, կնքել են Հուշագիր գործընկերության և համագործակցության մասին:

Փաստաթղթում նշվում է, որ երկու կազմակերպություններն իրենց գործունեությունում ղեկավարվում են Հայաստանի և Ուկրաինայի միջբանկային և ազգային շահերով, կարևորելով իրենց պետություններում ֆինանսաբանկային համակարգերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: ՀԲՄ-ն և ՈւԲԱԱ-ն իրենց ջանքերը կուղղեն Հայաստանի և Ուկրաինայի բանկերին աջակցելու, գործարար կապերը զարգացնելու, վերլուծական-տեղեկատվական նյութերի արդյունավետ փոխանակման, երկու երկրների ֆինանսական շուկաներում հանցագործությունների դեմ պայքարելու և այլ նպատակներին:



**ՀԲՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱՉՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ FM106.5  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ՌԱԴԻՈՅԻՆ**

21.05.2015

Բոլոր 21 բանկերը, որոնք կան Հայաստանում, կարող են և պետք է շարունակեն գործել, Հայաստանի բանկային համակարգը եզակիներից է, որտեղ կոռուպցիա գրեթե չկա: Ինչպիսի՞ հատկանիշներ պետք է ունենալ բանկիր լինելու համար, ի՞նչ կլինի բանկերի խոշորացումից հետո, ինչպե՞ս են

փոխվել բանկերը վերջին 15-20 տարվա ընթացքում, հնարավոր է արդյոք, որ մեր տնտեսության անկման պայմաններում բանկերն ավելացնեն իրենց շահութաբերությունը: Բանկային համակարգին վերաբերող բոլոր հարցերի պատասխանները տալիս է Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը:



**Ողջուն, սիրելի ռադիոլսողներ: Լրատվական ռադիոյի եթերում իր աշխատանքն է սկսում «Թարմ ուղեղով» հաղորդումը: Տաղավարում այսօր աշխատում է Լուսինե Հովակիմյանը, իմ հյուրն է Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը: Ողջուն:**

Բարև Ձեզ:

**Շնորհակալություն հրավերն ընդունելու և մեզ ժամանակ տրամադրելու համար: Առաջին հարցը՝ ինչպե՞ս եք Դուք հիմա գնահատում Հայաստանի բանկային համակարգի կայունությունը նախորդ տարվա համեմատ:**

Մենք ունենք ընթացիկ տարվա առաջին եռամսյակի արդյունքները, որոնք կարող ենք համեմատել անցյալ տարվա նույնատիպ ցուցանիշների հետ: Նվազում է նկատվում որոշ հիմնական ցուցանիշների մասով, ինչը կապված է անցյալ տարվա վերջում դրամի կտրուկ, կարելի է ասել, կտրուկ արժեզրկման և ընդհանուր տնտեսական իրավիճակի հետ: Այստեղ պետք է նկատել, որ, ըստ Կենտրոնական բանկի սահմանած ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նոր նորմատիվի, ինչպես գիտեք, Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը մինչև 2017թ-ի հունվարի 1-ը պետք է ունենան առնվազն 30 մլրդ դրամ ընդհանուր կապիտալ և դրա համար մենք սպասում ենք բանկերի կողմից իրենց կապիտալի շարունակական համալրում: Բնական է, դա պետք է տեղի ունենա արդեն իսկ ոչ երկու տարվա ընթացքում, այլ մեկ տարի յոթ ամսվա ընթացքում, և հաշվարկները ցույց են տալիս, որ այդ ժամանակահատվածի ընթացքում Հայաստանի բանկային համակարգ պետք է, էսպես, թե էնպես, հոսի լրացուցիչ մոտ \$300 մլն կապիտալ, եթե դուլարով արտահայտենք մեր այդ թիվը, ինչն էլ ավելի կամրապնդի համակարգի կայունությունը: Բնական է, եթե գումարներ են ավելանում բանկային համակարգում և կոնկրետ բանկերում, նրանց կայունությունն ավելանում է: Իմիջիայլոց, բանկային համակարգի կայունության մասին անուղղակի խոսում է նաև այն փաստը, որ այս տարվա առաջին երեք ամիսներին 21 բանկերը՝ գիտեք, որ Հայաստանում գործում են 21 առևտրային բանկեր, միասին պետբյուջե են վճարել մոտ 8 մլրդ 900 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից բարձր է 824 մլն դրամով, այսինքն՝ 9,2%-ով ավել:

Բանկերի խոշորացման մասին խոսենք, որը շատ փորձագետների մոտ, կարծես թե, հակասական կարծիքների տեղիք տվեց: Շատերը նշում են, որ բանկերը, որոնք ավելի փոքր էին, կարող էին ավելի լավ դիմակայել, երբ ֆինանսական ճգնաժամ կլիներ: Հետաքրքիր է այս հարցում Ձեր տեսակետը լսել:

Հիմա շատ մոդայիկ է դարձել անդրադառնալ անպայման Կենտրոնական բանկի որոշմանը՝ հանրահայտ, կասեի, որոշմանը՝ 30 մլրդ դրամի հասցնելն ընդհանուր կապիտալը բանկերի մոտ, քանի որ իրոք կտրուկ տարբերություն է տալիս նախորդ պայմանից, որն իր մեջ պարունակում էր 5 մլրդ, այսինքն՝ մինիմալ կապիտալը՝ 5 մլրդ դրամ: Այսինքն՝ 6 անգամ ավելացել է նորմատիվը, բայց դա չի նշանակում, որ բոլոր բանկերում պետք է 6 անգամ ավելանա կապիտալը, որովհետև շատ բանկեր կան արդեն, որոնք այդ ցուցանիշն ունեն, կան բանկեր, որոնք մոտ են դրան, և կան բանկեր, որոնք իրոք պետք է նոր ներդրումներ անեն, որպեսզի կարողանան համալրել 30 մլրդ-ը: Եվ մոդայից ելնելով, շատերը սկսում են խոսել, սկսում են, կներքեք կոպիտ արտահայտությանս համար, մոզոնել տարբեր տեսակի առիթներ, որպեսզի դրանով փնովեն այդ որոշումը:

**Այսինքն՝ Ձեր կարծիքով, որոշումը դրական է:**

Իմ կարծիքը ես արտահայտել եմ առաջին իսկ օրվանից, և դա կայանում էր հետևյալում՝ ես միանշանակ և բանկերի միությունը նաև դրականորեն ենք դիտարկում այդ որոշումը, որը բերում է, անկասկած, բանկերի ուժեղացման, մեծացման, կայունացման: Երկրորդը, մենք ունեինք նաև բավականաչափ երկար ժամանակ մի դիրքորոշում, որը մինչև հիմա էլ պահպանվել է, ճիշտն ասած, և դա ոչ մի ձևով չի նսեմացնում այդ ընդունած որոշումը Կենտրոնական բանկի կողմից: Ես միշտ արտահայտել եմ կարծիք, որ 30 մլրդ-ը վատ թիվ չի, բայց դրա հետ մեկտեղ դրա պահանջը կարելի էր դնել ոչ թե բանկերի առջև երկու տարվա ընթացքում հավաքելու միտումով, այլ գոնե հինգ տարվա, վեց տարվա: Ինչու՞ ոչ: Որպեսզի բանկերը չափազանց ճնշված իրենց չզգային: Սակայն Կենտրոնական բանկն, անկասկած, ունի իրեն բացատրությունը, որը չափազանց ընդունելի է, և նա ասում է, որ արդեն «Բազել 3»-ն է՝ այդպիսի հասկացություններ կան, Բազել քաղաքում ամեն անգամ՝ տասը տարին մեկ կամ մի քիչ ավելի ուշ, ընդունվում են միջազգային բնույթի որոշումներ բանկերի նկատմամբ, բանկերի նորմատիվների պահանջների նկատմամբ, և «Բազել 3»-ը շատ ավելի խստացված է, քան «Բազել 2»-ը և, որպեսզի Հայաստանի բանկերը կարողանան դիմակայել, իսկ ինքնին բանկերը Հայաստանի փոքր են, իսկ 30 մլրդ-ն արդեն հնարավորություն է տալիս մտածելու, որ կլինեն բանկեր, որոնք կունենան 100, ինչու՞ չէ, 200 մլն դոլարի չափով կապիտալ: Այնպես որ ես համարում եմ այդ որոշումը միանշանակ արդարացված: Դրա հետ մեկտեղ, իմ կարծիքն ունենալով ժամկետի առումով:

**Այս հարցի վերաբերյալ հաջորդ մտահոգությունը, որ արտահայտում էին, դա կադրերի ջարդն է, այսպես ասած: Մարդիկ, ովքեր այս համակարգի**

**արդյունքում կարող են կորցնել աշխատանքը, կարող է, արդյոք, դա սոցիալական բունտի հանգեցնել:**

Ոչ, չի կարող: Քանի որ ընդհանրապես բանկային համակարգում այսօր աշխատում են մոտ 11-12 հազար մարդ: Ընդհանուր աշխատողների թիվը Հայաստանի Հանրապետությունում, ես կարծում եմ, կարելի է ասել, որ 100 անգամից էլ ավել է: Այնպես որ 1%-ի հետ կապված ինչ-որ չափի կրճատում, այսինքն՝ զրո քանի տոկոս, չի կարող բերել սոցիալական, ինչպես Դուք նշեցիք, բունտի: Քիչ թե շատ կադրային կրճատումների մասին կարելի կլինեն խոսել այն դեպքում, երբ բանկերը, չկարողանալով լրացնել իրենց կապիտալը մինչև սահմանված ժամանակահատվածը, ուղղակի փակվեին: Եթե բանկը պետք է փակվի, բնական է, որ աշխատողները դուրս կմնան, բայց, կարծում եմ, իսկ, ավելի ճիշտ, գրեթե համոզված եմ, որ այդպիսի օրինակներ ընդհանրապես չեն լինի: Հիմնականում բանկերի կապիտալը կլրացնեն բաժնետերերը: Միզուցե, լինեն միավորումներ կամ որևէ բանկ կգնի մեկ այլ բանկ: Բոլոր դեպքերում խոսք անգամ չի կարող գնալ քիչ թե շատ կրճատումների մասին, որոնք հանգեցնեն սոցիալական բողոքի: Իմիջիայլոց, ասեմ նաև, որ բոլոր նշածս դեպքերում ավանդատուներին որևէ վտանգ, կապված բանկերում պահվող իրենց գումարների հետ, չի սպառնալու: Ո՛չ մի դեպքում:

**Ինչքանով է ճիշտ վարկերը վերցնել արտարժույթով: Արդյո՞ք արտարժույթով վերցված վարկերը չեն կարող հանգեցնել քաղաքացիների վճարունակության անկմանը:**

Ինչպես գիտեք, բանկերը նաև ֆինանսական կառույցներ են և...

**Առաջին հերթին... (Ժպտում է)**

... պետք է մտածեն իրենց ֆինանսական վիճակի մասին: Բանկերը, որպեսզի նվազեցնեն իրենց ռիսկերը, իրոք ներկայումս գերադասում են առաջարկել տարադրամային վարկեր: Տարադրամային վարկեր, որովհետև հիմա էլ անգամ շատ չնչին ձևով, բայց նկատվում է ամերիկյան դոլարի նկատմամբ դրամի անկում՝ շատ թեթև: Դա պայմանավորված է փոխարժեքի տատանումներից ապահովագրվելու ցանկությամբ: Ամենայն հավանականությամբ, այսօր ավելի լավ է ավելի շատ տրամադրել վարկեր արտարժույթով, քան դրամով: Ինչպես նաև կարող եմ ասել, որ տարադրամային ավանդների ծավալների աճով է դա պայմանավորված, դա՝ միանշանակ: Նշեմ, որ այս ժամանակահատվածում կարևոր են, մասնավորապես, գյուղատնտեսական վարկերը: Միանշանակ Հայաստանը դառնում է... դարձել է ավելի շատ գյուղատնտեսական երկիր, քան արդյունաբերության ոլորտում զարգացած երկիր, որովհետև, գիտեք, Սովետափութունից հետո քայքայվեցին բավականին կառույցներ՝ մեծ, հզոր, Սովետափության ժամանակ միութենական նշանակություն ունեցող:

**Դրա հետ կապված, ի դեպ, 1 դրամի 20 լուման գյուղատնտեսության ոլորտն է մեր երկրում ապահովում: Կարծում եմ, հետաքրքիր է:**

20%-ի մասին է խոսքը, և բանկային համակարգում էլ, իհարկե, եթե չեն սխալվում, մոտ 20%-ն է կազմում վարկերի... ընդհանուր տրամադրված

վարկերի քանակը գյուղատնտեսության մեջ: Դե, գիտեք, որ, օրինակ, գյուղատնտեսական վարկերը զարգացնելիս, կառավարությունը, մի կողմից, բարձրացրել է սուբսիդավորման տոկոսը՝ 6% է դարձրել: Այսինքն՝ եթե բանկը տրամադրում է գյուղատնտեսական կառույցին 14%-ով վարկ, կառավարությունը սուբսիդավորում է 6%-ը, և դա գյուղատնտեսական կառույցի վրա նստում է 8%: Իսկ այդ տոկոսով վարկերն արդեն, կարծում եմ, իսկապես պոզիտիվ, լավ վարկեր են, որոնք ունակ են կտրուկ լավացնելու տվյալ տնտեսության վիճակը: Իսկ մյուս կողմից, ավելացել է վարկերի սուբսիդավորմանը տրամադրվող գումարի չափն անցյալ տարվա նկատմամբ: Մայիսի 14-ին կայացած կառավարության նիստում վարչապետը հայտնեց, որ պետությունը այս տարի 10 մլրդ դրամ կհատկացվի գյուղատնտեսական վարկերի և դրանց տոկոսադրույքների սուբսիդավորելու համար: Կառավարությունը որոշում է կայացրել Կենտրոնական բանկին 10 մլրդ դրամ հատկացնել, իսկ Կենտրոնական բանկն, իր հերթին, այդ միջոցները կտա բանկերին՝ մեր կոմերցիոն բանկերին, գյուղացիներին 2 տարի ժամկետով և 8%-ով վարկեր տրամադրելու համար:

**Մինևույն ժամանակ շատերը նշում են նաև, որ գյուղացիներն ուղղակի էլ ի վիճակի չեն վարկեր վերցնելու:**

Էլ ի վիճակի չեն... դրանում մեղավորը բանկե՞րն են:

**Դրանում մեղավորն, ընդհանուր առմամբ, պետությունն է, և բոլոր այն պայմանները, որոնք եղել են մինչ այժմ: Եվ նաև այն, որ գյուղացին ուղղակի այլևս վճարունակ չէ, դրա համար էլ եկամուտներ չի ունենում ուղղակի վարկերը փակելու համար:**

Ես մի քիչ եղպես չէի ասի, ճիշտն ասած: Ես չէի ասի, որ դրանում մեղավոր է պետությունը: Անընդհատ, մի քիչ, գիտեք, այսպես ասած, հոգնել ենք՝ կառավարությունն է մեղավոր՝ այս կառավարությունն է մեղավոր, այն մյուս կառավարությունն է մեղավոր, էս անձի կողմից ղեկավարվող կառավարությունն է մեղավոր, էն մյուս անձի կողմից... վերջին հաշվով, ո՞րն է այն անձը, որը պետք է գա կառավարություն՝ էս ի նկատի ունեմ վարչապետներին, որը պետք է գա և լավացնի մեր իրավիճակը: Մեր իրավիճակի մասին խոսելիս (մենք փոքր երկիր ենք) - պետք է սկզբից հիշենք, նոր ամենավերջում անդրադառնանք մեր տարբեր կառավարություններին:

**Հա, էս հասկանում եմ, բայց ամեն դեպքում կա նաև զարգացման դինամիկա, չէ՞: Եթե եղպես է, գոնե զարգացման դինա...**

Այդ դինամիկան ո՞ր ժամանակահատվածում է տեղի ունենում: Օրինակ, վերցնենք այն հանգամանքը, որ էս անձամբ համարում եմ, որ 2006-2007թ-ից աշխարհում, Եվրոպայում, մեր տարածաշրջանում և, մասնավորապես, Հայաստանում ճգնաժամ է: Եվ Հայաստանն այսօր էլ չի դուրս եկել ճգնաժամից, ինչը մեծագույնս ազդում է տնտեսության զարգացման վրա: Երկրորդը, դա շրջափակումն է, որի առջև... Հիմա կասեն, ամեն ինչը գցում եք շրջափակման վրա: Չէ՛, ո՞վ է գցում: Ես ընդհանրապես անկախ մարդ եմ: Ես ոչ ներկայացնում

եմ կառավարությունը, ոչ էլ ներկայացնում եմ բուն ժողովրդին: Ես ներկայացնում եմ բանկային համակարգը:

**Այո:**

Այդ տեսակետից կասեի, որ մենք պետք է դեռևս այդ հարցն էլ լուծենք: Մենք շրջափակման մեջ ենք՝ մի կողմից, մի երկիրը, մյուս կողմից, մյուս երկիրը, անունները չեմ ուզում տալ: Երրորդ կողմից, էլի երկիր, որն անընդհատ պոչ է խաղացնում: Մինչև Ռուսաստան դուրս գալը, ներողություն, առևտրականը կամ արտադրողը, որն ուզում է իրեն ապրանքը հանել, վաճառել, պատովում է, կներեք: Մինչև դուրս է գալիս կես փողն արդեն ծախսում է եղ դուրս գալու վրա: Դրանից հետո ուզում էք, որպեսզի մեր տնտեսությունն արագ տեմպերով զարգանա, այն դեպքում, երբ որ Եվրոպայում զարգացած (ես նոր եմ եկել Եվրոպայից և եղել եմ չորս երկրում միանգամից: Տեսնում եմ, թե ինչ է կատարվում Եվրոպական երկրներում նաև): Շատ լավ երկրներ, որոնց անունը լսում եք, ասում եք՝ «այ երանի նրան, ով գնում է այդ երկիր», տեսնում եք, որ բավականին լուրջ ճգնաժամի մեջ են:

**Օբյեկտիվ պայմանները հասկանալի են, պարոն Ճզմաչյան: Բայց ուղղակի կարող եմ ամենահասարակ օրինակը բերել. վերջին շրջանում Ազգային ժողովում կրկին մի քանի վարկային համաձայնագրեր ներկայացվեցին, որոնցից մեկն, օրինակ, վերաբերվում էր աղբահանության համար վարկ վերցնելուն: Եթե մենք նույնիսկ տարրական աղբահանություն երկրի ներսում չենք կարողանում կազմակերպել էնպես, որ դրսից հավելյալ վարկեր չվերցնենք, մեր անընդհատ աճող արտաքին պարտքի պարագայում, կարծում եմ, այստեղ նաև սուբյեկտիվ պատճառներ կան, ի հավելումս Ձեր նշած օբյեկտիվ պայմանների:**

Մինչև Ազգային ժողովում կքննարկվի աղբահանության գծով վարկավորման հարցը ասեմ Ձեզ հետևյալը. հիմա այս պաշտոնում լինելով, չեմ սիրում կոնկրետ բանկերի անուններ տալ, բայց, քանի որ ես ինքս դուրս եմ եկել Անելիք բանկից, ասեմ, որ Անելիք բանկը դեռևս հինգ տարի առաջ սկսեց վարկավորել Գյումրիի և Վանաձորի աղբահանության ոլորտը: Ամբողջ մի հզոր կառույցներ էր ստեղծել և բավականին, լավ չեմ հիշում, բայց, կարծեմ, միլիոն և ավել փողեր էինք տրամադրել, և այդ հարցերն առաջ էին գնում: Իսկ հիմա նոր սկսել են քննարկել: Պետք է թողնել, որ մի քիչ ավելի բնական ձևով ամեն ինչ գնա: Իսկ որ Դուք ասում եք, իհարկե, սուբյեկտիվ պատճառներ կան... կա՞ երկիր, որտեղ սուբյեկտիվ պատճառներ գոյություն չունեն, բոլորն օբյեկտիվ պատճառներ են:

**Միանշանակ ոչ, բայց մեզ մոտ, կարծես, դրանք ավելի շատ են:**

Հունաստանի կառավարությունը ոչ մի սուբյեկտիվ պատճառաբանություն չունի: Քայքայված երկիր, տնտեսապես լրիվ վերացված երկիր: Պորտուգալիա, Իսպանիա, Իտալիա... ուզում եք էլի թվարկեմ:

**Չէ: Ես ուզում եմ հասկանալ, ինչու՞ ենք մենք վատ երկրների հետ համեմատվում:**

Վա՛տ: Ես անվանեցի վա՛տ երկրներ:

**Վատ կառավարվող երկրներ:**

Եկեք համեմատվենք միանգամից Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի հետ:

**Միանգամից չէ...**

Բա ո՞նց:

**... բայց գոնե տենդենցները պետք է լինեն, չէ՞:**

Քսան տարվա երկիր ենք: Քսանչորս:

**Չէ, ես ոչ թե գնահատական եմ տալիս, այլ ուղղակի ուզում եմ հասկանալ, ըստ Ձեզ, տենդենցներն ինչպիսի՞ն են: Այսինքն՝ ըստ Ձեզ, դինամիկան գնում է դեպի զարգացում:**

Բանկային համակարգում՝ այո: Հիմա մենք մի քիչ ավելի դանդաղած վիճակում ենք գտնվում՝ մեր տնտեսության զարգացումը միանշանակ դուլարի փոխարժեքի հետ է կապված: Ասեմ, նորից նշեմ, որ տարածաշրջանում մեր իրավիճակը սահմանափակված է: Նշեմ Ռուսաստանի նկատմամբ սանկցիաները: Նշեմ, որ Ռուսաստանը մեր հիմնական պարտնյորն է: Դրանք ո՞նց կարող են նշանակություն չունենալ: Իսկ եկեք մեզ շրջապատող երկրներին վերցնենք, որոնք կարծես թե պետք է ծաղկուն վիճակում լինեին: Այս մեր հարևան երկիրը՝ Ադրբեջան է կոչվում, ո՞նց է: Լա՛վ վիճակում է: Լա՛վ ֆինանսական վիճակում է: Հա, մի երկու-երեք հատ լավ սիրուն շենք սարքել են Բաքվում, ասում են:

**Մեզ մոտ էլ են լավ շենքեր կառուցել: Կարծես թե, ոչ ոք չի բողոքում:**

Մեզ մոտ հրաշալի է: Երևանից գեղեցիկ քաղա՛ք: Ամեն անգամ գնալով արտասահման և վերադառնալով, ես համոզվում եմ, որ Երևանից գեղեցիկ քաղաք չկա: Ասում եմ ես - բնիկ երևանցիս:

**Քանի որ նաև տնտեսության աճի դանդաղեցումից խոսեցիք, խոսենք այդ տնտեսության աճի դանդաղեցման և բանկերի շահութաբերության փոխկապակցվածության մասին: Եվ, Ձեր կարծիքով, այստեղ բանկերը որքանո՞վ կկարողանան իրենց շահութաբերությունն ավելացնել:**

Իհարկե, ինչը որ Դուք նշեցիք, դա լավագույն սցենարը չէ: Բանկերը, բանկային համակարգը տնտեսության անբաժանելի մասն են, արյունատար անոթները, ինչպես ընդունված է ասել, և եթե տնտեսությունը կաղում է, իսկ դա նշանակում է, որ նաև նվազում է սուբյեկտների և բնակչության վճարունակությունը, վարկերի վերադարձելիությունը, շահույթ ապահովելը դառնում է չափազանց բարդ բոլոր բանկերի համար: Այսօր բանկերի դեկավարները, բանկերի կառավարիչները, որոնք կոչվում են ն՛վարչության նախագահներ, ն՛ գործադիր տնօրեններ... Ես նրանց հերոսներ եմ համարում: Շատ դժվար է աշխատել, անչափ ծանր է ռիսկերը գնահատել: Չես իմանում, որտեղից կարող է հարվածը գալ՝ միջազգային ասպարեզից, արտասահմանից, ներսից: Ներսում էլ մենք ունենք մեր դժվարությունները, անկասկած, որոնց որ պետք է լուծում տալ: Եվ ուզում եմ ասել, որ բանկային համակարգն ինչ-որ կղզի չի, կամ օազիս չի, որ կարողանա բարգավաճել ընդհանուր

տնտեսությունից դուրս: Այսինքն, միշտ էսպես է եղել, և ճիշտ համեմատություն են արել: Ասում են, ասացվածք կա, օրինակ, եթե վերցնենք ռեալ տնտեսությունը և ֆինանսական, բանկային համակարգն... ասում են, հավն է ձվից, թե ձուն՝ հավից: Մեզ ասում են, մինչև անգամ քննադատաբար են ասում՝ այ գիտեք ինչ, որ դուք զարգանաք, տնտեսությունը կզարգանա: Մենք էլ պատասխանում ենք՝ մենք ո՞նց զարգանանք, եթե տնտեսությունը չի զարգանում: Նա էլ է ճիշտ, նա էլ: Իրար հետ մեջք մեջքի տված, մտածելով իրար մասին նաև, որովհետև ես խորապես համոզված եմ, լինելով բանկերի երկարամյա ղեկավար, ասում եմ հետևյալը՝ մեծագույն հաճույք է ցանկացած բանկիրի համար, երբ ինքը հաջողված ծրագիր է իրականացնում: Այսինքն, վարկավորում է սկսած սկսնակ բիզնեսից, ինչու՞ չէ, շարունակելով գործող բիզնեսը, որը դառնում է հնգապատիկ, տասնապատիկ անգամ ավելի մեծ, իսկ սկսնակը դառնում է լուրջ բիզնես: Դա մեծագույն հաճույք է բանկիրի համար:

**Քանի որ բանկերից ենք խոսում, Դուք, որպես երկար բանկային ճանապարհ անցած մարդ, ի՞նչ եք կարծում, կարևորագույն հատկանիշները նաև հաշվի առնելով, նախկինում ինչ որակներ էին ավելի շատ գնահատվում, հիմա ինչ որակներ են գնահատվում, ի՞նչպիսի կարևոր հատկանիշներ պետք է ունենա երիտասարդը, ով ցանկանում է բանկում աշխատել:**

Նայած ինչ ձգտումներ ունի երիտասարդը, ինչ բնավորության տեր է երիտասարդը: Միանշանակ է հետևյալը՝ ինչպես ասացի, բանկերում աշխատանքն առաջին հերթին պետք է ուղղված լինի... (ինձ համար միշտ եղել է ամբողջ իմ բանկային կյանքում մի ուղենիշ); իրենց վստահված փողերը պահելուն, պահպանելուն: Բանկիրն ընդհանրապես շատ քիչ քնող մարդ է: Չի քնում բանկիրը:

**Դուք քանի՞ ժամ եք քնում:**

Հիմա էլ և ժամանակին էլ և վերջին 35 տարին էլ 3-3,5 ժամ օրեկան: Ինձ հերիքում է դա: Եվ դրան պետք է ուղղված լինի աշխատանքը: Դա միանշանակ է: Ես միշտ համարել եմ, որ մյուս խնդիրները պետք է բխեն բացառապես դրանից: Եվ եթե երիտասարդն ունակ է այդ պայմանը կատարելու, իսկ որպեսզի նա ունակ լինի, պետք է լինի առաջին հերթին ազնիվ, նա կունենա առաջընթաց: Բանկիրը պետք է ազնիվ լինի: Մինչև վերջ պետք է ազնիվ լինի: Ռուսերենում այսպիսի խոսք կա՝ «говор дороже денег»: Եթե բանկիրը մի բանն ասում է, մյուս բանն անում է, նա բանկիր չի արդեն: Այդ տեսակետից ես խորապես համոզված եմ, որ որպեսզի երիտասարդն այդպիսի հատկություններ ունենա, նա պետք է բնածին ձևով լինի ուժեղ մարդ: Նա պետք է լինի խոսքի տեր մարդ: Նա պետք է լինի «թասիբի» տեր մարդ: Նա պետք է լինի անունի տեր մարդ:

**Թեման շարունակելով, կխնդրեմ համեմատականներ անցկացնեք ներկայիս բանկային համակարգի և տասը տարի առաջվա բանկային համակարգի միջև: Ի՞նչ հստակ փոփոխություններ եք Դուք նկատում: Կարևոր փոփոխություններ, որոնք արվել են:**



Այնքան դա երևացող է, որ մինչև անգամ ես կարծում եմ, որ 2-3 ամիս առաջ ցանկացած բանկ ընդունված անձ պետք է որ դա իմանա: Ես տեսել եմ, նա պետք է գոնե իմանա: Առաջին հերթին, միանշանակ է, որ այդ ժամանակահատվածում բանկերը շատ անգամ խոշորացել են: Երկրորդը, բանկերը տրամադրում են շատ ու շատ անգամ ավելի բանկային ծառայություններ: Անգամ ավելի... Քսան տարի առաջ ինչ էր՝ «ավանդ կուզենաս դնել, կարող եմ վարկ տալ»: Վերջ, դրանով ամեն ինչ ավարտվում էր: Հիմա միայն տասնյակ ու տասնյակ ծառայություններ կան միայն քարտային համակարգում: Երրորդ, բանկերում աշխատողները և մանավանդ ղեկավարները և, ինչու՞ չէ, սեփականատերերը շատ ավելի գրագետ և բանիմաց են դարձել: Դա միանշանակ է: Երիտասարդ բանկիրներ կան, 30-ից 40 տարեկան, ես ի նկատի ունեմ ղեկավարներին, հենց իսկ առաջին դեմքերին, առաջին-երկրորդ դեմքերին, որոնց հետ զրուցելը բարդ է, պետք է շատ զգոն լինել, որովհետև ամեն ինչ գիտեն: Կատարելապես ընդլայնվել են բանկերի միջազգային կապերը և միջազգային կապերն ավարտվում են ոչ միայն հաշիվներ ունենալով այլ բանկերում և այլն: Ավելի շատ դա վերաբերում է ռեալ գործունեությանը, ասենք, ռեսուրսներ գնելուն, վարկեր տրամադրելուն, իրար հետ պայմանավորվածություններ ունենալուն, որպեսզի նույն հաճախորդներին ավելի հեշտ սպասարկեն, ավելի լավ ծառայություններ մատուցեն: Ես քո, դու իմ: Մենք իրար վստահում ենք, ապա կարող ենք: Քիչ չի արդեն:

### **Ինչո՞վ է պայմանավորված երաշխավորված ավանդների առավելագույն չափը փոփոխելու նախաձեռնությունը:**

Հայաստանի կառավարությունը սկզբունքորեն կողմ եղավ Հայաստանի Կենտրոնական բանկի ներկայացրած «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու օրինագծին, որով, ինչպես գիտեք, 2,5 անգամ ավելացվում են ներկայումս գործող երաշխավորված բանկային ավանդների հատուցման չափերը: Մենք դրա մասին խոսել ենք, ես էլ այդ հանձնաժողովի անդամ եմ և, համաձայն այդ օրինագծի, Դուք գիտեք, որ 4 մլն դրամը միայն դրամային ավանդներ ունենալու դեպքում դառնում է 10 մլն և 2 մլն-ը դառնում է 5 մլն, եթե ավանդն արտարժույթային է: Այս նախաձեռնությունը միանշանակ օգուտ է ինչպես բանկերին, այնպես էլ նրանց հաճախորդներին, քանի որ բարձրացնում է բնակչության վստահությունը բանկային համակարգի նկատմամբ: Պատկերացնո՞ւմ եք, եթե ես ունեմ 10 մլն դրամ և 10 մլն-ն էլ գիտեմ, որ, անկախ բանկի վիճակից, ապահովագրված է, երաշխավորված է, ես հանգիստ եմ քնում: Իսկ եթե ես ունեմ 10 մլն դրամ ավանդ դրած, բայց գիտեմ, որ 4 մլն-ն է երաշխավորված, իսկ 6 մլն-ը, եթե հանկարծ, Աստված ոչ անի, բանկի հետ մի բան պատահի, իմ 6 մլն-ը կորելու է... տարրական թվաբանություն է: Ես ասեմ հետևյալը՝ խորապես համոզված եմ, որ այսօր բանկային համակարգում պայթյուններ չեն լինելու: Մեր զրույցի սկզբում ասացինք 30 մլրդ դրամին

հասցնելու հետևանքով և, երկրորդը, երաշխավորված գումարներն ավելացնելու հետևանքով: Ասում են անընդհատ՝ այս բանկը շուտով կպայթի, այն բանկը շուտով... ո՞վ է ասում: Ինչի՞ մասին է խոսքը: Գիտե՞ք, այսօր մեր հայկական բանկերն ինչ լիկվիդային են: Չափազանց լիկվիդային բանկեր են, այսինքն՝ ապահոված բանկեր են: Այնքան շատ փող ունեն, չգիտեն որտեղ տեղավորել: Կարող եք առարկել, ասել, որ տնտեսությունը չի կարողանում կլանել այդ փողերը: Կա նաև դա: Այո: Բայց դրա հետ մեկտեղ, պարադոքս է, բայց բանկերի մոտ ստեղծվում է ապահովվածություն:

**Դուք պատասխանեցիք արդեն հաջորդ հարցին, թե բանկերի օպտիմալ քանակը ո՞րն է: Այսինքն, կարծում եք, որ 21 բանկն էլ, որ այսօր կան, դա օպտիմալ քանակ է հանրապետության համար և բոլորն էլ կարող են...**

Միանշանակ: Էլի շատ և շատ «լավ» տնտեսագետներ, իրենց լավ տնտեսագետներ կոչող անձինք, ասում են, որ 21 բանկը շատ է Հայաստանի համար: Ինչ-որ համեմատում են այնպիսի երկրների հետ, որտեղ որ ավելի քիչ են: Ինչի՞ ես համեմատում: Ասենք, Էստոնիայում 6 հատ բանկ կա: 6 հատ բանկ կա, 5-ը՝ շվեդական են, մեկն էլ՝ ֆիննական: Լա՞վ է դա: Իսկ 6 հատ բանկը 1,5 մլն բնակչության համար է... մենք, այնուամենայնիվ, 3 մլն ենք: 3 մլն-ի պարագայում բանկերը մի քիչ ավելի փոքրացված են: Ասում են, բանկերը քչանան, որպեսզի իրենք խոշորանան, խոշորացումը հնարավորություն տա մեծ պրոյեկտներ վարկավորել: Կա մեզ մոտ լուրջ պրոյեկտ, որը բանկը չվարկավորե՞ց: Չկան այդպիսի պրոյեկտներ: Կլինեն - կբերեն ռեսուրսներ, կվարկավորեն: Դուք մի հատ պրոյեկտ առաջարկեք, հետո կտեսնենք բանկերը կվարկավորեն թե չեն վարկավորի: Կվարկավորեն, միանշանակ: Իրենց մայր բանկերից կբերեն, Եվրոբանկից կուզեն, վերջապես մեզ մշտապես օգնող Հայաստանի տնտեսությանը մշտապես աջակցող գերմանական KFW բանկից կբերեն: Բերում ենք և այսօր տարբեր բանկերը ոչ միայն այդ երկու-երեք իմ նշած բանկերի հետ են աշխատում, այլ աշխատում են շատ ավելի կառույցների՝ բանկային կառույցների, ֆինանսական ռեսուրսներ տրամադրող կառույցների հետ... Այնպես որ, մենք պատրաստ ենք: Ես խորապես համոզված եմ, որ 21 բանկը որևիցե ձևով չի խանգարում, այլ խթանում է մրցակցությունը բանկային համակարգում, և ինչքան քիչ բանկ, այնքան մրցակցությունը քիչ: Վերջերս նայեցի մի հարցազրույց, որտեղ ասվում է, որ ավելի լավ կլինի մրցակցությունը քիչ լինի, որպեսզի դրա վրա բանկերը քիչ փող ծախսեն: Քիչ մրցակցությունը, մրցակցության բացակայությունը բերում է անկման, վերացման: Ես էլ կասեմ եղպես:

**Ինչո՞վ են մրցակցում մեր բանկերը միմյանց հետ, բացի սպասարկման որակից:**

Հաճախորդի համար պայքար է գնում այսօր, իսկ ինչո՞վ... նախ, սպասարկումը: Հիմնականում: Բացի դրանից, վարկերի մեծ կամ քիչ տրամադրելու հնարավորություններով: Օրինակ, մեծ բանկերն, իհարկե, առավելություն ունեն: Նրանք կարող են և՛ փոքր վարկ տալ, և՛ շատ մեծ վարկ տալ: Փոքր

բանկերն այդ առավելությունը չունեն՝ կարող են միայն փոքր վարկեր տալ, տրամադրել: Բայց դրա հետ մեկտեղ մեծ բանկերն ավելի ծանրաքայլ են, մի քիչ ծանրաշարժ են, քան փոքր բանկերը, որոնք ավելի ճկուն են՝ հենց տեղում հարցերը լուծվում են, միանգամից տրամադրում են: Ամեն մեկն աշխատանքի մի ձև, մի ոճ է ընտրել:

**Շատ լավ: Եվ ամփոփելով, մի ընդհանուր հարց տամ՝ կա՞ ինչ-որ բան, որ Դուք արմատապես կփոխեիք մեր բանկային համակարգում:**

Ոչ: Եթե Դուք դա հարցնեիք ինձ 15-16 տարի առաջ, բնական է, ես Ձեզ կասեի՝ այո, որոշակի կոռուպցիան, որը մտած էր բանկային համակարգում: Այսօր բանկային համակարգում կոռուպցիա չկա: Այնքան լավ գիտեմ դա և այնքան մեծ ջատագովն եմ եղել կոռուպցիայի դեմ պայքարի: Հիմա 500-ից ավել մասնաճյուղեր կան, որ բոլոր բանկերն ունեն Հայաստանում: Այդ 500-ի մեջ, թե մի տեղ մի փոքր բան պատահի, մեկը ձեռքը տանի, ասենք, գանձապահը, հաշվապահը կամ մի քիչ ավելի բարձր պաշտոնյան, մի տեղ, որտեղ չի կարելի տանել, որն իրենը չէ... կարող է պատահել, որովհետև 100%-անոց որևէ բան գոյություն չունի, բայց 99,9%-ով մեզ մոտ դա վերացված է: Արմատապես ոչինչ չէի փոխի:

**Շատ շնորհակալություն զրույցի և մեզ ժամանակ տրամադրելու համար, պարոն Ջզմաջյան: Եվ այսքանով ավարտենք:**

Ես էլ եմ շնորհակալ Ձեր հարցերի համար: Լավ հարցեր էին:

**Շնորհակալություն:**

**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԻ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ**

05.05.2015

2015թ. մայիսի 5-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի 1-ին և 2-րդ թողարկումները ցուցակվեցին ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում՝ ընդգրկվելով պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում:

Բանկի առաջին թողարկման՝ 2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 1,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 7,5% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում SWISB1 հապավմամբ:



Բանկի երկրորդ թողարկման՝ 3 մլն ԱՄՆ դոլար ընդանուր ծավալով, 1,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 4 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 8% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում SWISB2 հապավմամբ:

Պարտատոմսերը թույլատրվել են նաև հասցեական և ՌԵՊՈ գործարքների կնքմանը:

Հիշեցնենք, որ ս.թ. ապրիլի 16-ին ընկերության պարտատոմսերը տեղաբաշխվել են ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի տեղաբաշխման հարթակում, իսկ ապրիլի 27-ին տեղի է ունեցել նաև պարտատոմսերի 3-րդ թողարկման տեղաբաշխումը:



**ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿ ԽՄԲԻ ՆՈՐ ՔԱՐՏԵՐԸ**

13.05.2015



«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն առաջին հայաստանյան բանկն է, որը սկսեց ընդունել և թողարկել VISA PayWave մեկ հպումով վճարային քարտերը, հաղորդում է բանկի մամուլի ծառայությունը:

Վճարումներ առանց քարտը դրամապանակից հանելու՝ ընդամենը մոտեցնելով այն ոչ կոնտակտային հաշվարկային սարքին: Մինչև 10 հազ. դրամ գնումների դեպքում հաճախորդից չի պահանջվում մուտքագրել պինկոդը:

Visa payWave տեխնոլոգիան թույլ է տալիս կատարել ակնթարթային

«Այս հնարավորություններն առայժմ հասանելի են մայրաքաղաքի 23 առևտրային կետերում, հետագայում դրանց թիվը կավելանա», – նշել են մամուլի ծառայությունից:



14.05.2015



Արարատբանկը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ, EBRD) կողմից ճանաչվել է «2014թ. ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում»՝ Միջազգային առևտրի խթանման ծրագրի (TFP) շրջանակում:

Թբիլիսիում ՎՋԵԲ-ի տարեկան ընդհանուր ժողովի շրջանակում ընթացող առևտրի ֆինանսավորման համաժողովի ժամանակ մրցանակը հանձնվել է Արարատբանկի պատվիրակությանը, որը

զլխավորել են բանկի խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանը և վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը:

Արարատբանկում նշում են, որ TFP Award մրցանակին բանկն արժանանում է չորրորդ անգամ:

Եվրոբանկի ավագ մասնագետ Կամոլա Մահմուդովան ասել է, որ բանկն ակտիվորեն մասնակցում է ՎՋԵԲ-ի բոլոր ծրագրերին, «մասնավորապես մեծ ձեռքբերումներ ունի կադրերի որակավորման ուղղությամբ իրականացված ծրագրերում, ինչով և պայմանավորված են նման հաջողությունները»:



Աշոտ Օսիպյանի խոսքով՝ այս մրցանակը որակի նշան է և պարտավորեցնող գնահատական: Կարևորելով ՎՋԵԲ-ի հետ երկարաժամկետ համագործակցությունը՝ Արարատբանկի վարչության նախագահը նշել է, որ բանկային ծառայությունների շուկայի բարձր մրցակցության պայմաններում նման ձեռքբերումը վկայում է, որ բանկը զարգանում է ճիշտ ուղղությամբ, և բանկի մատուցած ծառայությունները համապատասխանում են ՎՋԵԲ-ի պահանջներին:



## FITCH-ի «B+» ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻՆ

14.05.2015



«Fitch» միջազգային վարկանշային հեղինակավոր կազմակերպությունն Ամերիաբանկին շնորհել է Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (B պյուս) վարկանիշ՝ բացասական հեռանկարով (Long-term Issuer Default Rating (IDR)), հաշվի առնելով տարածաշրջանի տնտեսական զարգացումները: Այսպիսով՝ առաջին անգամ հայկական ընկերությանը տրվում է իր երկրի վարկանշային մակարդակին հավասար վարկանիշ, որը համաշխարհային

պրակտիկայում համարվում է յուրաքանչյուր ընկերության վարկանիշի գնահատման լավագույն ցուցանիշ:

Նման վարկանիշի ստացումը կնպաստի միջազգային ասպարեզում Ամերիաբանկի ճանաչելիության և բանկի հանդեպ վստահության մակարդակի բարձրացմանը, Հայաստանում օտարերկրյա ներդրողների հետ գործընկերական հարաբերությունների ընդլայնմանը:

Նշենք, որ ներկայումս Հայաստանում սակավաթիվ ընկերություններ ունեն միջազգային վարկանշային ընկերությունների կողմից ստացված վարկանիշ, իսկ մասնավորապես «Fitch» կազմակերպության վարկանիշ ունի միայն Ամերիաբանկը: Այն տրվել է, հաշվի առնելով մի շարք կարևոր ցուցանիշներ, մասնավորապես, բարձր մրցակցության պայմաններում ընկերության առաջատար դիրքը և մասնաբաժինը շուկայում, վարկային ներդրումների, հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների կայուն աճը, առևտրի ֆինանսավորման, ավանդների ցուցանիշները, վարկային պորտֆելի որակը, ակտիվների և կապիտալի շահութաբերության մակարդակը, ինչպես նաև մի շարք այլ ցուցանիշներ:

Վարկանիշի ստացումը վկայում է Ամերիաբանկի բաց ու թափանցիկ գործունեության մասին:

\* \* \*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):